



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 26 ՍԵՄՏԵՄԵՐ, 2016

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ԲԱՆ ՀԳ

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ողորմած, բազմագութ, հգօր, ահաւոր,  
մարդասէր, օրհնեալ, կենդանի, անճառելի Աստուած,  
Քու խօսքէդ դուրս չ'ելլեր երբեք որեւէ բան  
որուն մեք չենք կրնար ձեռնարկել,  
եւ որուն մեր միտքը չի կրնար հասնիլ:  
Դուն միայն կրնաս խիստ փուշերուն մէջէն փաղցր պտուղներ դուրս տալ:  
Դուն որ Հայրն ես կեանքի նոր ու զարմանալի սկզբունքներուն:  
Ատողին բարիք ընել, հալածիչին համար աղօթել,  
խոցողին համար փրկութիւն հայցել,  
սպաննողին համար ներում խնդրել:  
Եթէ ուզես փաւել՝ կարող ես. եթէ բժշկել՝ գօրաւոր ես.  
Եթէ կենդանացնել՝ ձեռնհաս ես.  
Եթէ շնորհել՝ առատ ես. եթէ առողջացնել՝ հնարաւոր ես.  
Եթէ պարգեւել՝ ամենալից ես. եթէ արդարացնել՝ ամենարուստ ես.  
Եթէ միջոցարել՝ ամենամերձ ես. եթէ նորոգել՝ ամենակալ ես.  
Եթէ հրաշագործել՝ ամենաթագաւոր ես.  
Եթէ վերստին հաստատել՝ Արարիչ ես.  
Արդ, այս բոլորը բեզի միայն կը պատշանին.  
Օրհնեալ եղիր յաւիտեանս. ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Վրի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,

Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻՒԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 1:15-17; 2:1-15



Փեսան կը յիշեցնէ հարսին, թէ նախ ինչպիսի գեղեցկութիւն ունէիր, եւ դրախտային երանական կեանքը կ'ապրէիր, որմէ գրկուեցար եւ կորսնցուցիր, այդ փառքը անհնազանդութեան պատճառով: Հակառակ այս իրողութեան, սակայն, փեսան ինք յանձն առաւ զոհուիլ, եւ անով ողորմութիւն շնորհել հարսին:

Փեսան նաեւ կը յիշեցնէ, այն գեղեցկութիւնը որ փրուած էր մարդուն, Աստուծոյ պարկերն ու նմանութիւնը, իսկ Անոր պարուիրանները մանեակի մը նման դրուած անոր պարանոցին, որպէս գեղեցկութիւն: Բայց մարդը, իր մարդկային բնութեամբը, փոխանակ ըլլալու Աստուծոյ բնակարան, դարձաւ Փառաւոնինը:

Բայց հակառակ այս իրողութեան, հարսին փրուեցաւ նոյն գեղեցկութիւնը, որովհետեւ հրաժարեցաւ մեղքէն, եւ անոր աչքերը կը նմանին աղանիի աչքերուն, որ կը խորհրդանշէ Սուրբ Հոգիի պարգեւները: Քրիստոս պիտի ըսէ. «Աչքն է մարմնին ճրագը. Եթէ աչքդ առողջ է, ամբողջ մարմինդ լուսաւոր կ'ըլլայ, իսկ եթէ աչքդ վարատողջ է՝ ամբողջ մարմինդ խաւար կ'ըլլայ» (Մատթ 6:22-23):

Ահա այս իսկ պատճառով հարսը կը խոստովանի ըսելով, այնքան արեւն որ չունէի աղանիի աչքեր, չէի կրնար րեսնել փեսային գեղեցկութիւնը, որ հինայի ողկոյզի պէս է: Ահա Սուրբ Հոգիի շնորհքներն են, որ մեզի կու փան կարողութիւնը րեսնելու:

Եւ ահա հարսը կը խոստովանի թէ անկողինը կանաչ, որ կը խորհրդանշէ կեանք, իսկ փրուներուն գերանները եղեւնափայլե, որ չփրոջ ու անուշահոտութիւն ունի, որ նաեւ Քրիստոսի մարմինը չփրոջ եւ անուշահոտութիւն ունի:

Սարօնին ծաղիկն եմ, հովիւներուն շուշանը: Ինչպէս շուշանը փուշերուն մէջ, այդպէս ալ սիրուիին աղջիկներուն մէջ: Ինչպէս խնձորենին անփառին մէջ, այդպէս ալ սիրականս երիտասարդներուն մէջ:

Այնքան որքան կը սօսենանք Քրիստոսի այնքան առաւել եւս կը սկսինք Քրիստոսը ճանչնալ: Նոյնպէս ալ Հարսը կը սկսի կամաց կամաց առաւել եւս գովեստը հիւսելու Փեսային: Առաջին հերթին զայն նմանցնելով շուշանի եւ ծաղիկի, իսկ հիմա խնձորենիի: Որովհետեւ ծաղիկը միայն աչքը կը զուարճացնէ, իսկ խնձորը րեսքով՝ աչքը, հոտով՝ քիմքը, եւ ապա կերակուրի համար զօրութիւն ունի:

Իսկ միւս կողմէ, մեղաւոր մարդկութիւնն ալ կամաց կամաց առաւել եւս կը սկսի չարանալու: Սկիզբը փուշեր, իսկ հիմա արդէն անփառի է վերածուած:

Հարսը կը փափաքի խնձոյքի փուշը երթալու, հոն ուր գինի կայ: Հարսը ալ չի փափաքիր ուրիշներէ լսելու Փեսային մասին, ինչ որ խորհրդանիշ է անցեալի մարգարէներուն, որոնք պարզամեցին ու խօսեցան Քրիստոսի ու անոր բերելիք փրկութեան մասին: Իսկ հիմա Հարսին միակ փափաքն է Քրիստոսի հետ ըլլալը: Հոն ուր նաեւ գինի կայ: Գինին խորհրդանիշ է աստուածային պարգեւներուն: Ինչպէս որ գինին առիթ է, որ մեր փրկմանը կը մոռցնէ, նոյնպէս եւ առաւել եւս աստուածային պարգեւները մեզ կը միտնաբերեն, կը զօրացնեն որպէսզի կարենանք շարունակել մեր հաւարքի ընթացքը:

Հարսը, րակաւին, Փեսային սիրովը կը նուագի, կը հալի: Քրիստոսի ներկայութիւնը այդպիսին է: Այնպէս ինչպէս երկու սիրահարներ դէմ յանդիման իրարմով կը զքանջանան, նոյնպէս ալ Հարսը Փեսայով:

Իդով զիս զօրացուցէք, իւղը խորհրդանիշ է ողորմութեան: Հետեւաբար, որքան Հարսը կը րեսնէ Փեսան, ու մասնաւոր անոր հոգիի աչքերը կը բացուին առաւել եւս կը սկսինք ճանչնալու Քրիստոսին, ու Անոր ողորմութիւնը:

Խնձորներով ուժովցուցէք: Այսպէս խնձորները խորհրդանիշ են առաքիներութեան: Հետեւաբար մարդու առաքիներութիւնները նաեւ գինք կը զօրացնեն: Միւս կողմէ, Քրիստոսի սիրոյ ուժականութիւնն է, որ սուրբերը իրենց կեանքը այնպէս ապրեցան, հակառակ իրենց ունեցած նեղութիւններուն ու փառապանքներուն:

Պօղոս առաքեալ պիտի ըսէ. «Ո՛վ կրնայ մեզ Քրիստոսի սերէն բաժնել, ոչ մահը, ոչ անձկութիւնը, ոչ ալ տառապանքը» (Հռոմ 8:35):

«Լեռներուն եւ բլուրներուն վրայ ցարկրպելով եկաւ, որպէս այժեամ կամ եղնիկի ձագ»: Լեռներուն եւ բլուրներուն վրայ ցարկրպելով եկաւ Քրիստոսը ինք, որ կը խորհրդանշէ Սաքանային բռնութիւնը, որ ոտնակոխեց իր գալուստով: Որպէս այժեամ կամ եղնիկի ձագ, որովհետեւ կենդանիներուն մէջ ամենալաւ տեսնողն է, ինչպէս Քրիստոսի պարագային ամենապետ: Եղնիկը նաեւ այն կենդանին է որ կը սպաննէ օձը: Այնպէս ինչպէս Քրիստոս պիտի իր ոտքերուն տակ առնէ առաջին օձը, Սաքանան:

«Չմեռը անցաւ», կը նշանակէ կռապաշարութիւնն ու Չարին խաբէութիւնը անցաւ, եւ սհա ծաղիկները կ'երեւան: Այնպէս ինչպէս գառնան ծաղիկները գեղեցիկ են ու կը գեղեցկացնեն, նոյնպէս ալ Քրիստոսի գալուստով սուրբերը գեղեցիկ են ու պիտի գեղեցկացնեն ու զարդարեն: Ինչպէս գառնան թռչունները կը սկսին երգելու, այնպէս ալ արդարները կը սկսին իրենց պտուղը տալու:

Ի վերջոյ, բռնեցէք աղուէսները, որ խորհրդանշէ Չարին, այնպէս ինչպէս առաքեալները գացին եւ իրենց տրուած իշխանութեամբ կապեցին Չարը, որպէսզի ազատագրուի անոր ճանկերուն բռնուած մեղաւոր մարդը: